



Գ. Ա. ՀԱԿՈՐՅԱՆ

(Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՍԵՌԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ\*

Այժմ անցնենք շարականների բնույթին, զարգացմանն ու մահացմանը վերաբերող տեսակետների քննարկմանը:

Շարականների վերաբերյալ իր կատարած ուսումնասիրություններում պրոֆ. Մ. Աբեղյանը այն կարծիքին է, որ եկեղեցական բանաստեղծները և նրանց գրվածքները գրեթե կապ չունեն հայ իրականության հետ:

«Աշխարհուրացության ձգտումով բռնված հին եկեղեցական բանաստեղծը,— գրում է պրոֆ. Աբեղյանը,— շատ չէր կարող ազդվել հին հավատալիքներից ու գաղափարներից, կամ իր ոգևորության աղբյուր ունենալ հայկական իրականությունն իր բազմազան կողմերով»<sup>21</sup>:

Ապա պրոֆեսոր Մ. Աբեղյանը գտնում է, որ մեր հոգևոր երգը քիչ է կապված հայկական իրականության հետ, խորթ է, որովհետև,— ասում է նա,— «Մեր բանաստեղծության այս տեսակն ինքնաբերաբար չի եղել մեր մեջ, այլ ինչպես ֆրիստոնեությունը, դրսից է եկել»<sup>22</sup>:

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 6-ից:

<sup>21</sup> Մ. Աբեղյան, «Հայ հին գրականության պատմություն», գիրք Ա, էջ 474:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 475 (ընդգծումն իմն է—Գ. Հ.):

Բանաստեղծության այնպիսի մի պատկանելի տեսակ, որն սկսած Ե դարից մինչև ԺԵ—ԺԶ դարերը գոյություն է ունեցել ու զարգացել, տվել է այնպիսի գեղեցիկ ու բարձր արվեստով գրված քնարական ու վիպական, ազգային ու պատմական նշանակություն ունեցող գործեր, ինչպիսիք են՝ Կոմիտասի «Անձինք նուիրեալք»-ը, Սարկավագ վարդապետի Ղևոնդյանց նվիրված «Պայծառացան այսօր» և այլ շարականները, Ներսես Շնորհալու՝ Վարդանանց ու Ղևոնդյանց նվիրված «Նորահրաշ պսակաւոր», «Արիացեալք», «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականները, նույն Շնորհալու շարականները՝ նվիրված Տրդատին, Ներսես Մեծին, Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին, Հովհաննես Երզնկացու (Պլուզի)՝ Լուսավորչին, դարձյալ Ներսես Մեծին նվիրված և այլ բազմաթիվ շարականները, այսպիսի տեսակը համարել ոչ ինքնաբերաբար, «դրսից եկած» ու խորթ, որը կապ չունի հայ իրականության հետ՝ ճիշտ չի լինի: Վերևում թված շարականների թեմաներն ու բովանդակությունը ոչ միայն ազգային են, կապված հայ իրականության ու նրա հոգեկան մշակույթի հետ, այլև նրանցից մի քանիսը արտահայտում են ջերմ հայրենասիրություն՝ ինչպես Վարդանանց ու Ղևոնդյանց նվիրված և այլ շարականները:

Այնուհետև պրոֆ. Մ. Արեղյանը շարահանների զարգացումն ու զարգացումը բացատրում է հոգևոր երգի և ժամակարգության անոններիով: Դժվար է համաձայնել մեծ փոխակալների և՛ այս կարծիքի հետ: Մեր հին շարականության մի ճյուղն էլ շարականներն են, որոնք, ինչպես և այդ գրականության ճյուղերը, իրենց զարգացման համար առանձին որևէ կանոնի անհրաժեշտություն չեն ունեցել, այլ ընթացել են կյանքի ու աշխարհայացքի փոփոխության համեմատ: Կանոնական է, որ այդպիսի պայմանների արդյունք են նաև շարականները, տաղերն ու առանձները, որոնք միշտ էլ շրջանցելով գոյություն ունեցող եկեղեցական կամ կրոնական աշխարհի ու կարգը, ներթափանցել են նաև եկեղեցի և երգվել ու տարածվել հայ ժողովրդի մեջ:

Հոգևոր երգը՝ շարականները, տաղերը, առանձները, սկսած Ծ դարից, Եկեղեցու նշանավոր հայրերը շատ անգամ են փորձել դնել առանձին, այսինքն սահմանների և շրջանակների մեջ, տալ նրանց ցանկացած ընթացք, բայց ոչ միշտ է հաջողվել այդ, որովհետև թողգամատիկ կանոնները երբեք չեն կարողացել խափանել մարդու հույզերի արտահայտությունը: Ապացույց՝ մեր բազմաթիվ պատմական շարականները:

Պրոֆ. Մ. Արեղյանը հայոց հոգևոր երգի մեջ կանոնի մուտքը դնում է Ը դարում. «Կանոններ,— գրում է նա,— հայոց հոգևոր երգի մեջ մտել է VIII դարի առաջին կեսին ապրող Ստեփանոս Սյունեցու ձեռով, որ իր ժամանակի նշանավոր գիտուններից մեկն է եղել»<sup>24</sup>: Այնուհետև Մ. Արեղյանն այն կարծիքն է հայտնում, որ կանոնների գոյությունը պետք է դարկ տար շարականների զարգացմանը, բայց այդպես չի եղել...: «Այդ դարից սկսած,— շարունակում է Մ. Արեղյանը,— ամերգության մեջ մի մեծ փոփոխություն է տեսնում, դա «կանոնների» գոյան է, որ իր արդյունքից նպաստում է հոգևոր երգի բազմապատկում»<sup>25</sup>:

Թվում է, թե Ը դարի սկզբներից Ստեփանոս Սյունեցու ձեռով Հայ Եկեղեցի ղեկավարող զործած կանոնը իրոք պիտի նպաստեր շարականների բազմապատկում, ինչպես ասված է: Բայց հակառակն է ստացվում: Հուսալից մեխանիկորեն Հայ Եկեղեցի փոխադրված այդ «կանոն»-ներից 2—3 դար առաջ, Ե—Ը դարերում, երբ հոգևոր երգին ավերաբերող նման և ո՛չ մի կանոն ղեռ գոյություն չունեին հայ իրականության մեջ, շարականները բազմանում, զարգանում ու տարածվում էին:

Մեր շարականների սեռի պատմության մեջ Ե, է և Ժ դարերը, իրենց հարստությամբ ու պայծառությամբ, փայլում են: Ինչպես տեսնում ենք, կանոնի բացակայությունը չի խանգարել հոգևոր երգի զարգացման գործին: Իսկ ի՞նչ պատկեր են ներկայացնում շարականների զարգացման տեսակետից Ը դարի երկրորդ կեսը, Թ և Ժ դարերը: Այդ նույն «հունական կանոնը» Հայոց Եկեղեցի մտցնող, նշանավոր երաժիշտ և շարականների հեղինակ Ստեփանոս Սյունեցուց հետո, մոտ 3 դար, մինչև Պետրոս Գ-տադարձ կաթողիկոսը, մեր մատենագիրների մոտ, ձեռագրերում և շարականի առաջաբանում ո՛չ մի հիշատակություն չկա փոքրիշատե աչքի ընկնող շարականի որևէ հեղինակի մասին:

Եթե իրոք կանոնը նպաստավոր լիներ շարականների զարգացման համար, ապա Ը դարից մոտ 70 տարի, Թ և Ժ դարերը պետք է իրենց շարականներով ամենահարուստը լինեին, մինչդեռ, ընդհակառակը, բոլորովին ամալություն է տիրում այդ դարերում:

Եթե մինչև այդ, այսպես կոչված կանոնը, մեր շարականները ծնվում ու զարգանում էին, այդ պետք է բացատրել մեր ժողովրդի սոցիալ-բազմազան պայմաններով: Երբ մեր ազգային մշակույթն ու գրականությունը ձևավորվում և ուժեղանում էին՝ միաժամանակ հակադրվում օտար, խորք գաղափարախառնություններին՝ ազգի ինֆեուրույն մշակույթը պահպանելու համար:

Վերևում հիշված մոտ 3 դարերի ամալությունը հոգևոր երգի բնագավառում պրոֆ. Մ. Արեղյանը դարձյալ բացատրում է հոգևոր երգի կանոնով:

«Այս պատճառով,— գրում է պրոֆ. Մ. Արեղյանը,— պետք էր սպասել, որ կանոնի շրջանում մեր հոգևոր քնարերգությունը նոր ուժով զարգանար, սակայն Ստեփանոս Սյունեցուց հետո IX և X դարերում չեն հիշատակվում հոգևոր երգի հեղինակներ: Եվ այդ, կարծում եմ, անհիմն չէ: Այն դարերում արդարև կանոնները հետզհետե ընդունելություն են գտել, բայց չեն եղել անհրաժեշտ, պարտադիր, ուստի և չեն ազդել հոգևոր երգի զարգացման վրա»<sup>26</sup>:

Ուրեմն, ըստ պրոֆ. Մ. Արեղյանի, եթե կանոնը պարտադիր լիներ, հոգևոր քնարերգությունը կզարգանար: Զի զարգացել այն, ավելի ճիշտ կանգ է առել, որովհետև կանոնները դեռևս պարտադիր չեն եղել: Ապա ինչպե՞ս բացատրել մեր բազմաթիվ շարականների առաջացումն ու զարգացումը առանց

24 Մ. Արեղյան, նշված աշխատությունը, էջ 484:

25 Նույն տեղում, էջ 483:

26 Նույն տեղում, էջ 468 (ընդգծումն իմն է—Գ. Լ.):

կանոնի, ինչպե՛ս հասկանալ և է դարերի այնքան բազմազան ու բարձր արվեստով ստեղծված հոգևոր երգերը, որոնց մասին հիշվեց:

Այս դարերի հոգևոր քնարերգության դարգացումը բացատրվում է ժամանակի ոգով: Ե դարում հարկավոր էր ուժեղ ազգային գրականություն ու մշակույթ, որպես հոգևոր գեներ՝ հայ ժողովրդի գոյությանն ու մշակույթին սպառնացող պարսից ֆաղափականության և գաղափարախոսության դեմ: Այս դարում հայ ժողովրդի գրականությունն ու մշակույթը մի հոգևոր պատվար էր թշնամի-զավթիչների դեմ:

Այսպիսի պատկեր էր ներկայացնում նաև է դարը, միայն այն տարբերությամբ, որ այս անգամ հայ ժողովրդի գոյությունն ու մշակույթը արաբական բռնակալության վտանգի տակ էին: Ազգի ինքնուրույնությունն ու մշակույթը օտար բռնակալներից պաշտպանելու համար, հարկավոր էր դարձյալ ուժեղ հոգևոր զենք: Կյանքի պայմաններն էին, որ անհրաժեշտ հող հանդիսացան է դարում արվեստի տարբեր ճյուղերի, գրականության և գիտության զարգացման համար: Շարականների դարգացումն էլ սերտորեն կապված է մեր ընդհանուր մշակույթի զարգացման հետ, որպես նրա օղակներից մեկը:

է դարում հատկապես շատ է զարգացել մեզ զբաղեցնող հոգևոր երգը, որն այնքան շատ ու տարածված է եղել Հայոց Եկեղեցում, որ մի գավառի եկեղեցում երգվող շարականը մյուս գավառում չգիտեին: Այս խառնաշփոթ դրությունը, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, հարկադրում է ժամանակի ներսես Շինող կաթողիկոսին՝ զբաղվելու շարականների ընտրությամբ և խմբագրությամբ:

«Ի՛նչպե՛ղ եղև սմա (խոսքը ներսես Շինողի մասին է—Գ. Հ.) աշխարհաժողով բազմութեամբ ի տօնի Վարդավառին լինել ի Բագուան. և բազմացեալ էին երգք շարականաց յեկեղեցիս հայոց, մինչև ոչ գիտել միոյ գաւառի երգեցող՝ զմիւտոյն. և ասացին շարական Վարդավառի Հարցինն, և միւս դասն ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարականս, և ոչ դայն ևս գիտէին: Ապա հայրապետն ներսէս հաւանութեամբ ամենայն ժողովոյն ընտրեցին զպիտանին և զօգտակարն. զի յամենայն յեկեղեցիս յամենայն աւուր մի պաշտօն լիցի ըստ աւուրն խորհրդոյ, և ընտրեցին արս իմաստունս, զի շրջեսցին ընդ ամենայն աշխարհս Հայոց, և զնոյն կարգատրութիւնս հաստատեսցեն, որ է մինչև ցայսօր»<sup>27</sup>:

Ապա ներսես Շինող կաթողիկոսը հանձնարարում է Դպրեվանքի առաջնորդ Բարսեղին (ձոն մականունով), որ խմբագրի Շարականը: Եվ այդ խմբագրված Շարականը մինչև օրս էլ կոչվում է «ձոնընտիր» Շարական: Հետո՝ Ը դարի սկզբներում, դարձյալ նախքան «կանոն»-ները, շարականները նմանապես շատ էին զարգացել ու տարածվել, չհանված նույնիսկ Բարսեղ ձոնի խմբագրած ու կանոնավորած Շարակնոցը: Այս անգամ էլ շարականների և Եկեղեցու արարողությունները կարգավորելու գործով զբաղվեց Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսը: Տիրող խառնաշփոթությունը վերացնելու համար, 720 թվականին Օձնեցին Դվինում հաստիվ ժողով հրավիրեց՝ Հայոց Եկեղեցու հին ավանդություններն ու ծեսերը վերականգնելու և ամրապնդելու համար: Պատմաբան Հովհաննես կաթողիկոսը Օձնեցու հիշված ձեռնարկումների մասին ասում է. «... տայ Եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնն նաև պաշտման ժամուց, գեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ, և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս»<sup>28</sup>:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ հունական կանոնը Հայոց Եկեղեցի մուտք գործելուց հետո շարականների սեռը թուլացել է և 730 թվականից մինչև 1020 թվականը՝ մինչև Գեսադարձ կաթողիկոսի օրերը, գրեթե դադարել:

Այս վկայություններն ու փաստերը կրկնակի կարևոր են դառնում, քանի որ ցույց են տալիս, թե ի՛նչպես այդ դարերում Հայոց Եկեղեցում միատեսակ ժամերգությունը և կանոնը պարտադիր չեն եղել, ուստի շարականները ազատ կերպով մտել են ժամերգության մեջ և երգվել, հետևապես զարգացել են ու տարածվել: Դուրս է գալիս միանգամայն հակառակը, այն է, որ կանոնը նպաստավոր չի եղել շարականների զարգացման համար, իսկ նրա բացակայությունը, ընդհակառակը, նպաստել է շարականների զարգացմանը:

Դեռ շատ չանցած ձոնընտիր շարականի խմբագրվելու ժամանակից, նորից բազմանում են շարականները և երգվում եկեղեցիներում առանց որևէ կարգի, որի մասին դարձյալ Օձնեցին գրում է. «Քանզի տեսանեմ ի յուրվագոյն և ի ծանր իրս անկարգութեան բազմացեալ, ոչ միայն ժողովրդականս, այլ առաւել յուխտի մանկունս և յառաջնորդս եկեղեցեաց: Որք մին լեզուի ձեռն միոյ քարոզի ի մի եւլք ճշմարտութեան ճանապարհ,

27 Կ. Գանձակեցի, էջ 59:

28 «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղիմ, 1867, էջ 120:

և արդ բազմահետք և բազմաշաւիղը եղար, յանշափաբար և դանազան և այլաձևան առնելոյ՝ թէ զվարս և եթէ զփառաբանութիւնսն որ առ Աստուած»<sup>29</sup>։

Հովհան Օձնեցու Ատենաբանության մասին խոսելիս Մ. Աբեղյանը Լեզրակացնում է, որ շնայած այդ գործից որոշ գլուխներ ու մասեր պակասում են, չկան, շքայց եղածից պարզ երևում է, թէ ինչ խայտառակութուն է իշխելիս եղել նրա օրով հայոց եկեղեցիներում աստվածապաշտության ժամանակ»<sup>30</sup>։

Այս երևույթը շատ հետաքրքրական է նաև նրանով, որ Հովհան Օձնեցին և Ստեփանոս Սյունեցին ժամանակակիցներ են և ականավոր եկեղեցական հայրեր, որոնք ապրել են Բ դարի առաջին կեսում, մեկը կարգ ու կանոն է մտցրել Եկեղեցում Հունաստանից վերադառնալուց հետո, մյուսը բողոքում է Եկեղեցում տիրող անկարգության, ժամերգության ժամանակ եղած խայտառակութունների դեմ։

Եթէ ժամերգության կանոնը, ինչպես ընդունված է ասել, բերված է Բ դարում Սյունեցու ձեռքով և ընդունված Հայոց Եկեղեցու կողմից, դժվար թէ միաժամանակ գրվեր այդպիսի «խայտառակ» կարգ ու կանոնի մասին, այն էլ ժամանակի կաթողիկոսի կողմից։ Օձնեցու և պատմագիրների ասածներին այդ անկարգության մասին շեք կարող չհավատալ, բայց վերապահումով պետք է ընդունել, թէ իրո՞ք կանոնը Հույն Եկեղեցու Հայկական Եկեղեցի մտել է Բ դարում։ Եղե՞լ է իսկպպես այդպիսի կանոն, և եթէ այլ, արդո՞ք այն ընդունվել և տարածվել է Հայաստանի եկեղեցիներում։

Վերջապես, ժամակարգության հարցերով ժԲ դարում լուրջ զբաղվում է նաև Ն. Շնորհալին։ Հայաստանի տարբեր մասերում ժամասացության տարբերությունները պայմանավորված էին նաև երկրի սոցիալ-քաղաքական և աշխարհագրական դրությամբ։ Հայաստանի արևելյան մասերում ժամերգությունն ավելի ազգային ու մաքուր էր մնացել, քան արևմտյան մասի եկեղեցիներում, որտեղ օտար հողի վրա դանց էին առնվել մի շարք հին, ազգային հոգևոր երգեր։ Ժամերգության մեջ նորից առաջացել էին խառնաշփոթություններ։

Ուշագրավ է այն, որ անգամ Շնորհալու ժամանակ տերունական տոները դեռ թերի էին կատարվում, այսինքն՝ տոներ չունեն լրիվ ութ տեսակ շարական, այդ պատճառով էլ

թերին լրացնելու համար միևնույն շարականը երգում էին մի քանի օր։

Այս երևույթը նույնպես ցույց է տալիս և հաստատում, որ Սյունեցու ձեռքով մտցրած հոգևոր երգին վերաբերող կանոնը կամ բողոքովին չի ազդել շարականների վրա և կամ նույնիսկ ժԲ դարում ընդունված չի եղել Հայոց Եկեղեցու կողմից։ Այլպպես, ըստ այդ կանոնի, ամեն մի տոն կամ սուրբ պետք է ունենար ութ ձայնից բաղկացած ութ տեսակ շարականներ։

Այս բացը վերացնելու և ժամերգությունը դարձյալ արդիական ու հետաքրքիր դարձնելու նպատակով, Շնորհալին սահմանեց բազմօրյա տերունական տոներ և վերջիններիս համար զրեց հատուկ շարականներ, որոնց վերնագրերն ու կանոնները մանրամասն թվում են Կ. Գանձակեցին և Շարակնոցի նախաբանը։

Այս բողոքից հետո հասկանալի է, որ մեր հին գրականության սկզբնավորման ժամանակներից մինչև ժԲ դարը շարականների մուտքը եկեղեցի միշտ էլ ազատ է եղել, և շարականների զարգացմանը դրսից եկած ո՛չ մի կանոն չի նպաստել, որովհետև այդպիսի կանոնը, ինչպես ցույց տվեցին փաստերը, ո՛չ մի գործնական նշանակություն չի ունեցել շարականների սեռի զարգացման համար։ Մեր եկեղեցական դրքերը, օրինակ Տօնացուցը, ժամագիրքը միշտ էլ խմբագրվել ու լրացվել են անհրաժեշտության դեպքում և ժամանակի ոգուն համաձայն։ Բայց այդ խմբագրություններից և ոչ մեկը չի խանգարել մեր հոգևոր երգի տարածմանը։

Այժմ տեսնենք, թէ ի՞նչպես է բացատրվել շարականների դադարման, մահացման երևույթը։

Խոսելով Շարակնոցի՝ տարբեր ժամանակների և տարբեր մարդկանց ձեռքով խմբագրվելու մասին, Մ. Աբեղյանը գրում է. «Բայց շնայելով դրան՝ մեր շարականների զարգացումը գրեթե միանգամից դադարում է XIII դարում։ Այստեղ ևս մեր հոգևոր երգը հետևելով է հունական օրհներգությանը, որի ծաղկումը վերջանում է XI—XII դարերի մեջ»<sup>31</sup>։

Դուրս է գալիս, որ մեր հոգևոր երգը, ինչպես իր զարգացման շրջանում՝ Բ դարում, հետևում է Հունական Եկեղեցուց եկած կանոններին, այնպես էլ այժմ՝ ժԳ դարում, դադարում է, այն էլ «միանգամից», որովհետև ժԱ—ժԲ դարերում դադարում են հունական օրհներգությունները, այսինքն՝ հունական հոգևոր երգը։ Ուրեմն մեր շարականների զարգացումն ու դադարումը մեխանիկորեն

<sup>29</sup> Յովհան Օձնեցի, «Ատենաբանութիւն», 2-րդ հատված։

<sup>30</sup> Մ. Աբեղյան, նշված աշխատությունը, էջ 478։

<sup>31</sup> Մ. Աբեղյան, նշված աշխատությունը, էջ 487 (ընդգծումն իմն է—Գ. Հ.)։

կապվում են հունական կանոնի և ոչ թե հայ ժողովրդի հոգևոր կյանքի հետ:

Իսկ ինչպե՞ս է բացատրում Մ. Աբեղյանը շարականների մահացումը: Հետևողական կերպով այդ մահացումը ևս բացատրվում է կանոնով և ժամակարգութեամբ:

«Դրա պատճառն այն է,— գրում է Մ. Աբեղյանը,— որ ժամակարգութիւնը փակվում է, և նոր երգերն այլևս չեն ընդունվում ամենօրյա ժամերգութեան կանոնի մեջ... Բանաստեղծները հույս չունենալով, թե իրենց երգերը կընդունվեն կանոնի մեջ, այլևս չեն գրում նոր շարականներ, որով և շարականի տեսակը գրեթե XIV դարումը արդեն մեռնում է»<sup>32</sup>:

Նույնպիսի կարծիք է հայտնել Մ. Աբեղյանից 10 տարի առաջ, 1901 թվականին «Լուսն» ամսագրում Գ. Խաչկոնցը. «ԺԳ դարուն այլևս կդադրի շարական հորինելու փափագը, տոներն ու ժամակարգութիւնն իրենց վերջնական կատարելագործումը գտած էին»<sup>33</sup>:

Ինչպես շարականների ծագման, զարգացման վերաբերյալ եղած բացատրութիւններին, այնպես էլ այս վերջին բացատրութեանը չի կարելի համաձայնվել:

Նախ, ինչպես արդեն ասված է, շարականները մեր հին գրականութեան մի ճյուղն են կազմում և իրենց զարգացմամբ ու դադարմամբ ենթակա են այդ գրականութեան զարգացման ընդհանուր օրենքներին:

Երկրորդ, եթե կանոնով ու ժամակարգութեան դադարումով բացատրենք շարականների մահացումը, հետևողական լինելու համար պետք է ընդունել, որ եթե ժամակարգութիւնը ժԳ դարում չփակվեր, ապա շարականները չէին դադարի գոյութիւն ունենալուց և կշարունակվեին այնքան, որքան ժամանակ տեւեր ժամակարգութիւնը:

Երրորդ, շարականներն ինչպես միանգամից չեն առաջացել, այնպես էլ միանգամից չէր, որ մահացան: Դրանք, ինչպես տեսանք, սկզբից փոքրիկ, ոչ ինքնուրույն երգեր էին կցորդ անունով, որ աստիճանաբար զարգացան, դարձան ինքնուրույն երգեր, որոնք ոչ միայն այլևս սաղմոսների կցորդներ չէին, այլև բացասեցին սաղմոսերգութիւնը, որոշ ընդհատումներով զարգացման զագաթնակետին հասան ժԲ դարում՝ ներսես Շնորհալու մոտ, այնուհետև աստիճանաբար սկսվեց նրանց մայրամուտը, դանդաղումը և ապա մահացումը: ԺԳ դարում սկսվում է շարականների անկումը՝ վերածնութեան երևույթների ուժեղացման պատճառով, բայց դեռ ոչ

մահացումը: Էլի մեկ-մեկ երևում էին բավական զեղեցիկ շարականներ, որոնք փայլում էին մայր մտնող արևի շողերի պես Որպես օրինակ բերենք ժԾ դարի երկրորդ կեսին ապրող բանաստեղծ Երզնկացի Կիրակոս վարդապետի «Արևելք գերարփին» շարականը՝ Մարիամ Աստվածածնի մահվան առթիվ գրված, որը մինչև օրս էլ Եկեղեցի երգում է վերափոխման տոնի օրը:

Ահա նմուշներ այբուբենի կարգով գրված այս զեղեցիկ շարականից.

Արևելք գերարփին՝ և օթարան լուսածին:

Ձանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր

Բարեխօսեա Միածնին Աստուածածին

Դու ծաղիկ անթառամ՝ տոհմի սեռիս

Եւ շառաիղ օրհնութեան՝ նախնոյ ծնողի

Մարգարիտ լուսափայլ, Հոգւոյն Սրբոյ

Մարգարէից բանք նախաճառ՝ այսօր լցա

Մովսէս դասուքն իւրովք իսպառ՝ ի պատի

քո անդ զօրանայր<sup>34</sup>

ԺԳ—ԺԾ դարերում, դեռ էլի կան շարականների նշանավոր հեղինակներ, որոնք գործերը չի կարելի բոլորովին աչքաթող անել և ընդունել, որ մեզ մոտ շարականի տեսակը ժԳ դարում «միանգամայն» դադարել է: Այդպիսի հեղինակներից կարելի է նշել հետևյալներին՝ Կիրակոս Երզնկացի, Կոստանդին Արևելցի, Գրիգոր Մերենց, Առաքել Սյունեցի և այլն:

Այս բոլորից հետո կարելի է եզրակացնենք՝

Շարականներն առաջացել են Ե դարում զարգացել մեր հին գրականութեան հետ միասին՝ որպես նրա անբաժան մասը, որպես գրական առանձնահատուկ մի սեռ:

Շարականներն իրենց էութեամբ ազգային են՝ կապված հայ ժողովրդի անցյալի հոգեկան և մշակութային կյանքի երևույթներին հետ, հետևապես նրանք խորթ, օտարամուկամ «ոչ ինքնաբուխ» չեն:

Այդ շարականները մինչև ժԲ դարը կոչվել են հոգևոր երգ, իսկ շարական բառն սկսել է գործածվել ժԲ դարից և հայկական բառ է:

Սկզբնական շրջանում մեր հոգևոր երգը որոշ չափով ազդվել է հունական և ասորական հոգևոր երգերից, հետագայում՝ գրեթե

<sup>32</sup> Մ. Աբեղյան, նշված աշխատութիւնը, էջ 488:

<sup>33</sup> «Լուսն», գիրք Բ, 1901, էջ 356:

<sup>34</sup> «Շարական», էջ 387—388:

գյուտից հետո, ազգային գրականության սկզբնավորման ժամանակներից աստիճանաբար ազատվում է այդ ազդեցություններից և դառնում է ինքնուրույն, ազգային:

Ազգի հոգեկան մշակույթի պահպանման և գաղափարական-դավանաբանական պայքարի բնագավառներում շարականները ևս եղել են մի տեսակ առանձնահատուկ հոգևոր զենք՝ օտար աշխարհակալների ու նրանց գաղափարախոսությունների դեմ պայքարելու համար:

Շարականների առաջացումը, զարգացումն ու մահը ոչ թե կապված են եղել եկեղեցա-

կան կանոնների հետ կամ հետևել են Հունական եկեղեցու կանոններին, այլ այդ երկույթները սերտ կապված են մեր ժողովրդի հասարակական կեցության և հոգեկան կյանքի հետ:

Շարականները միանգամից չեն դադարել կամ մահացել: ԺԲ դարում հասնելով իրենց զարգացման գագաթնակետին, այնուհետև աստիճանաբար թուլանալով, տեղի տալով տաղերին, բնության, կյանքի ու սիրո երգերին, այսինքն՝ աշխարհիկ քնարերգությանը, ԺԶ դարում միայն նրանք վերջնականապես դադարել են:

